ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԵՐԻՑԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ.—«ՆԻՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»։ Ա.—Գրիգոր Արծրունու և նորա քսանեւհինգ տարուայ գրական գործունէութեան առիթով (1865—1890 թ.). Թիֆլիս, տպարան Տ. Նազարեանցի, 1890 թ., քառածալ, 100 երես, տառ № 12։ Գինն է 50 կոպէկ։

Ահա մի գրքոյկ, որը լիապէս արդարացնում է իւր վերնագիրը, իբր «Նիւթեր հայոց պատմութեան համար», և իրաւ արժանի ոչ միայն կարդալու, այլ և ուսումնասիրելու։ Գիրքը բաղկացած է երկու գլխից, որոնցից առաջնում (34 երես) պատմում է Գէորգ Արծրունու և այն բոլորի մասին, ինչ կապ ունի այդ մարդու անձնաւորութեան և գործունէութեան հետ։ Երկրորդ գլխում պատմում է Երեմիա Արծրունու, և սորա որդիների և այն ամենի մասին, ինչ կապ ունի Գրիգոր Արծրունու կեանքի հետ մինչ «Մշակ» լրագրի հիմնելը։ Կենտրոնակէտ ունենալով Գէորգ, Երեմիա և Գրիգոր Արծրունիներին, հեղինակը մեզ տալիս է հմուտ անձից քաղած տեղեկութիւններ։ 1) Թիֆլիսը դարուս առաջին կիսում, 2) Վանը, 3) հին Արծրունիների տոհմի մասին, 4) Տպարանական գործի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում, 5) Ներսէս Աշտարակեցին, 6) Ներսիսեան Դպրոցը, 7) Թատրոնական գործը Թիֆլիսում, 8) Պետրոս Սիմոնեանցը, 9) Ռուսահայերի կրթութեան գործը համալսարաններում ներկայ դարում, 10) Աբովեանց, Նազարեանց և այլք և Դորպատի համալսարանը, 11) Հայկական նոր բանաստեղծութեան սկզբնաւորութիւնը, 12) Հայկական առաջին պարբերական հրատարակութիւնները, 13) Մոսկուայի ուսանողական ժողովի սկիզբը, 14) Հայկական թատրոնի սկիզբը, 15) Պետերբուրգի համալսարանը 60-ական թուականներում, 16) Եղեանց, 17) «Հիւսիսափայլ» և «Կռունկ», 18) «Մեղու» լրագիրը, 19) Գրիգոր Արծրունու աշխատակցութիւնը «Մեղու» և «Հայկական Աշխարհ» թերթերում—ահա այն առարկաները, որ յաջորդաբար

շօշափում է պ. Երիցեանը իւր այս 100 երես գրքոյկի մէջ, որը կարդացւում է մեծ հափշտակութիւնով: Լեզուն բաւականաչափ կանոնաւոր չէ Նորագոյն աշխարհաբարի տեսակէտից:

Ա. Ա.

ՄԱԼՈՒՄԵԱՆ, Խ.—«ՄՏՔԻ ՄՇԱԿԸ». *Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան* 25-*ամեակի առիթով: Թիֆլիս*, 1890 *թ., տպարան* Տ. *Նազարեանցի, քառածալ*, 96 *եր., տառ* № 12: *Գինն է* 50 *կ.:*

Գրքոյկը պարունակում է հետեւեալ գլուխները. 1) *Ներածութիւն,* 2) *կենսագրական տեղեկութիւններ,* 3) *Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան սկզբնաւորութիւնը,* 4) *Հայոց մամուլի անցեալի մասին,* 5) *«Մշակի» սկզբնաւորութեան հանգամանքները,* 6) *Նոր մեթօդ և նոր ուղղութիւն,* 7) *Ընդհանուր հայեացք Գրիգոր Արծրունու գործունէութեան մասին,* 8) *Մի քանի գծեր Արծրունու կեանքից,* 9) *Առաջադիմական շարժումներ:*

Առաջին գլուխները հազիւ դուրս եկած՝ արդէն հնացան, որովհետև գրեթէ միաժամանակ լոյս տեսաւ պ. Ալ. Երիցեանի գրքոյկը, որի առջև պ. Մալումեանցի տուած տեղեկութիւնները գրականապէս ոչ մի արժէք չեն կարող ներկայացնել: «Հայոց մամուլի անցեալի մասին» գլխում բոլորը, ինչ տեղեկութիւններ են, քաղած են Ցարուկի մի բրօշիւրից հայոց մամուլի մասին: Եւ պ. Երիցեանի գրքոյկը նաև այդ կողմից գերազանց է: Իսկ ինչ վերաբերում է մասնաւորապէս «Հիւսիսափայլ»-ի և «Կռունկ»-ի գնահատութեան, Մալումեանցի գրածը մի շատ թոյլ արձագանք է արդէն ցայժմ յայտնած մտքերի:

Մի փոքր աւելի հետաքրքրութիւն ներկայացնում է 5-երորդ գլուխը՝ «Մշակ»-ի սկզբնաւորութեան մասին. բայց այժմ, երբ այդ մասին նոյն իսկ գործին մասնակցող անձերը հակասող մտքեր են յայտնել—Մալումեանցի պնդումները ճշդութեան տեսակէտից կորցնում են իրանց արժէքը:

«Նոր մեթօդ և նոր ուղղութիւն» գլխում Մալումեանցը յայտնում է, թէ մինչև «Մշակ»-ը հայոց մամուլի մէջ տիրում էր քարոզչական մեթօդը, իսկ «Մշակ»-ը մտցրեց բնագիտական մեթօդ մեր հրապարակախօսութեան մէջ: Առաջին ածականը Մալումեանցը վերցրել է Ա. Արասխանեանցի յօդուածից Ստեփան Նազարեանի հրապարակախօսութեան մասին, երկրորդ ածականը հեղինակը վերցրել է Արծրունու մի յօդուածից՝ իւր սեպհական հրապարակախօսութեան մասին: Բայց որքան գրչի սխալ էր այդ Արծրունու կողմից, նոյնքան ոչ պատուաբեր կրկնութիւն է թւում այդ